

ՊԵՐՖԵԿՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Լեզվաբանական գրականության մեջ միատեսակ կարծիք Perfect-ի մասին գոյություն չունի: Որոշ քերականներ բոլոր Perfect-ային ձևերը դիտում են մեկ տեսանկյունով, մյուսները՝ գատում Perfect-ի ներկա ժամանակը որպես մի ձև, որը մի շարք պահերով չի համընկնում Perfect-ի մյուս ձևերի հետ: Որոշ հեղինակներ, որոնք Perfect-ը համարում են հարաբերական ժամանակ, մեկնաբանում են այն ավել կամ պակաս անհետևողականորեն: Լեզվաբանների մի ուրիշ խումբ Perfect-ը դասում են կերպի կատեգորիայի շարքը (Դեյլքեյն, Չարլարոն), իսկ Իյիչը, Կրեյգերը և Սորիսը դիտում են Perfect-ը որպես արդյունքի կերպ: *Արդյունք* հասկացության տակ ի նկատի են ունենում ավարտված գործողության հետ ներկա պահի կապի զանազան և անորոշ դեպքեր: Բոլոր դեպքերում Perfect-ը արտահայտում է ավարտված գործողության ներկա ժամանակի սահմաններում: Ավարտված գործողության տակ այստեղ ի նկատի է առնվում իրերի այնպիսի դրություն, երբ գործողությունն ավարտվում է ոչ թե ներքին պատճառների ուժով, այլ որովհետև այն լրիվ կատարված է, գործողություն, որը հասել է իր վերջնակետին, սպառել է ինքն իրեն և այդ պատճառով չի կարող շարունակվել:

Սաացինք, որ որոշ հեղինակներ ավարտվածության գաղափարը Perfect-ի հետ համարում են կարևորագույնը: Սակայն այլ հեղինակներ, մասնավորապես Եսպերանը, Բրայանը, առաջ են քաշում *inclusive Perfect*-ի գաղափարը, երբ Perfect-ը արտահայտում է գործողություն, որը շարունակվում է մինչ խոսելու պահը, և հետևապես՝ չավարտված գործողություն:

You have been in this house a year

I've handled these anti-toxins ever since they first came out.

ՊԵՐՖԵԿՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԻՄԱՍՏԸ

Վերսում գլխավորապես քննարկվեց Perfect-ի կերպային նշանակությունը և բացահայտվեց, որ նրա հիմնական իմաստը գործողության ավարտվածությունն է խոսելու պահից առաջ, սակայն գործողության այնպիսի ժամանակամիջոց, որը դիտվում է որպես ներկա: Այժմ արդեն անհրաժեշտ է կանգ առնել Perfect-ի ժամանակային նշանակության որոշ առանձնահատկությունների վրա: Այստեղ հարկավոր է անդրադառնալ նրան, որ Perfect-ը ունի նախորդելու իմաստ: Այս իմաստը ենթադրում է մի այլ գործողություն կամ էլ ժամանակի համադրության ինչ-որ արտահայտումն առկայության մասին: Perfect-ի գործողությունը հարաբերակցվում է խոսելու պահի հետ, որը, որպես կանոն, ոչ լեքսիկոնեն և ոչ էլ քերականորեն չի արտահայտվում, իսկ ինչ վերաբերում է մի այլ գործողության հետ հարադրմանը, ապա Perfect-ի համար բնորոշ է այդպիսի օգտագործում:

Անշուշտ, հետևյալ նախադասությունում նախորդելու իմաստը առկա է, սակայն այստեղ նա չի մթազնում իսկական նշանակությունը:

Hi knows, we may conjecture, nothing of what has occurred.

Սակայն նախորդելու իմաստը եական չէ հետևյալ նախադասություններում:

I have one card left to play that **you've forgotten**. I am glad we **have met**, Sir. I **have let** the flat for you and like a good steward I bring you some money.

Այն հանգամանքը, որ Perfect-ով արտահայտված գործողությունը տեղի է ունենում ներկա անորոշով կամ էլ ներկա շարունակականով դրված գործողությունից առաջ, բխում է նրա կերպային բնույթից, գլխավորը այստեղ հանդիսանում է գործողության կերպային բնութագիրը, այլ ոչ թե այն, որ նրանցից մեկը կատարվել է ավելի շուտ, իսկ մյուսը նրանից հետո:

Perfect-ի գործողությունը ընթանում է ժամանակի մի հատվածում, որը զատված չէ ներկա պահից, այսինքն ներկա ժամանակից:

Տվյալ դեպքում ներկայի իմաստը բավականին անսահմանափակ է: Այն ժամանակ, երբ ներկան սովորաբար սահմանակցող ժամանակամիջոց է խոսելու պահի երկու կողմերի հետ, ապա Perfect-ի գործողությունը ընթանում է այն ժամանակամիջոցում, որը շարունակվում է, ներառյալ մինչև խոսելու պահը:

Համեմատենք հետևյալ օրինակները՝

I am very glad that you have come, said Lily ... Things immeasurably are greater than man in every respect but brain **have existed and perished**.

Այստեղ բոլորովին ուրիշ է Perfect-ով արտահայտված գործողությունը ժամանակամիջոցի տևողությամբ, համեմայն դեպս, բոլոր դեպքերում էլ այդ ժամանակամիջոցը հասնում է մինչև խոսելու պահը և նրանից անջատված չէ: Այսպիսով գործողության և խոսելու պահի միջև հարկավոր է ժամանակի տեսակետից խզում: Perfect-ի գործողությունը տեղի է ունենում խոսելու պահին, այն ավարտված է վաղօրոք: Ուրեմն գործողությունը խոսելու պահի հետ կապված է ոչ թե անմիջական ժամանակային կապով, այլ որ այն տեղի է ունենում այն ժամանակամիջոցում, որի վերջնական կետը խոսելու պահն է:

Գործողության պահի ֆիքսման բացակայությունը խոսում է Perfect-ի մեկ այլ առանձնահատկության մասին: Կապը խոսելու պահի հետ կարող է լինել մոտ կամ հեռու, այսինքն Perfect-ը կարող է արտահայտել մասնակի գործողություն անմիջապես կապված խոսելու պահի հետ, կամ արտահայտել գործողություն, որն ունի ավելի ընդհանրացված բնույթ, և ահա այս ժամանակ լրիվ բացակայում է ժամանակի կոնկրետացման գաղափարը: Օրինակ՝

When a man **has experienced** some great and totally unexpected reverse of fortune, **has been swept** from one plane of existence to another, that he should fail at once to recognize the full magnitude of that change is but natural.

PERFECT-Ի ԵՎ PAST INDEFINITE-Ի ՀԱՍԱԴՐՈՒՄԸ ՈՒՂԻՂ ԽՈՍՔՈՒՄ

Անորոշ անցյալի հիմնական դերը անցյալում կատարված գործողության արտահայտումն է, այսինքն մի ժամանակահատվածի, որն ավարտվել է մինչև խոսելու պահը: Այս հիմնական դերի հետ մեկտեղ անցյալը հաճախ է օգտագործվում ուղիղ խոսքի մեջ, առանց նշելու ժամանակը: Այս կարգի օգտագործումը հատկանշական է նաև Perfect-ի համար: Այսպիսով անցյալ անորոշը և Perfect-ը կարող են հայտնվել ուղիղ խոսքի մեջ՝ բոլորովին համանման պայմաններում:

Անցյալ անորոշը արտահայտում է մի գործողություն, որը տեղի է ունեցել անցյալում, այսինքն այն ժամանակահատվածում, որն ավարտվել է խոսելու պահից առաջ, իսկ Perfect-ը արտահայտում է իրականացված գործողություն, որը հասել է մինչև խոսելու պահը: Սակայն ժամանակահատվածները, երբ տեղի են ունենում Perfect-ով կամ անցյալով արտահայտված գործողությունները, կարող են համընկնել: I saw him on Thursday, կամ I have seen him this week.

Հետազոտությունները ցույց են տալիս, որ մի կողմից իմաստների մոտիկությունը այնպիսին է, որ ոչ միշտ է հնարավոր տալ ճիշտ սահմանազատում, իսկ մյուս կողմից էլ հարկավոր է առանձնացնել ուղիղ խոսքի մեջ օգտագործվող անցյալ ժամանակի որոշակի սկզբունքներ: Հարկավոր է նշել, որ բայերի որոշ խումբ ավելի հաճախ է հանդիպում ուղիղ խոսքի մեջ (to say, tell, ask, think, forget, mean, feel, want, hope):

You have no right to say that I expressly said that I am ready to go through with it. Hector, don't be rash, my boy. I'm sorry for what I said. Well,—he muttered,— I told you how it would be.

Բերված օրինակներում անցյալ անորոշի օգտագործումը կարծեք թե վերականգնում է ճիշտ հաջորդականությունը ինչ-որ ժամանակ ասվածի և տվյալ պահին հիշեցման միջև: Իսկ երբ այդ բայերը օգտագործվում են Perfect ժամանակով, ապա շեշտվում է ոչ թե ասվածի բովանդակությունը, որքան ինքը՝ փաստը: Perfect-ը մատնանշում է նաև այն, որ այդ արտահայտությամբ առաջացած դրությունը իրական է անգամ ներկա պահին.

I've already said that I'm quite ready.

A promise is a promise. Louise has already told me it is you wish.

Ոչ միայն վերաբերմունք, այլև կոնկրետ գործողություն արտահայտող բայերը ևս նախապատվությունը տալիս են անցյալ անորոշ ժամանակին, երբ նրանք օգտագործվում են ուղիղ խոսքի մեջ, և եթե տվյալ բայը ուշադրությունը իրավիրում է այլ գործողության վրա, ոչ թե իր իսկ արտահայտած գործողության վրա: Դա լավ երևում է come բայի օգտագործումից: Այդ տիպի օրինակների մեծ մասում come բայը օգտագործվում է անցյալ անորոշով: Այսպիսի արտահայտությունների իմաստային կենտրոնը գալու նպատակն է, իսկ Perfect-ով օգտագործվող փոքրաթիվ օրինակներում նախադասության նույնատիպ կառուցվածքներում արտահայտման կենտրոնը ավելի շուտ սուբյեկտի գալու պատճառի բացատրությունն է, այլ ոչ թե նպատակը:

I came to tell you that Soames has been to see me. O'h, I merely came back to water the roses. I thought you were with uncle Jack. I've come to offer my humble congratulations. I have come here in the cause of justice.

Հարկավոր է նշել մի ուրիշ կարևոր հանգամանք ևս: Անցյալ անորոշը, որպես կանոն, օգտագործվում է այն դեպքերում, երբ նպատակ արտահայտող գործողությունը իրագործվում է ներկա ժամանակում, առանց ապագայում շարունակվելու հեռանկարի: Ընդհակառակը, երբ առկա է շարունակվելու գաղափարը, ապա այս դեպքում օգտագործվում է Perfect Tense-ը:

Paris became impossible—and I have come here to be within reach of your advice.

I have come to bring you home, dear brother.

Իսկ մի շարք դեպքերում էլ անորոշ անցյալ է օգտագործվում տվյալ կոնտեքստում Perfect-ը օգտագործելու անհնարինության պատճառով:

Օրինակներում, որոնք հիմա կբերվեն, Perfect-ը կնշանակեր անհայտ խոսակցին տեղեկություն տալու փաստը, և այդ պատճառով այստեղ հարկավոր է միայն անցյալ անորոշ ժամանակը:

What exactly do you want? – She deserted me. I want a divorce. I know when to be frank. I learnt the trick from your Majesty.

Իսկ այսպիսի օրինակում, ինչպես՝

You know that I love you, and you led me to believe. Miss Fairfax, that you were not absolutely indifferent to me.

Perfect-ի օգտագործումը շեշտ կդնեն lead բայի վրա, և ամբողջը կհնչեր որպես անտակտ հանդիմանություն:

Անցյալ անորոշ է օգտագործվում նաև այն դեպքում, երբ գործողությունը չի ստեղծում այնպիսի իրադրություն, որը կարող է ելման կետ հանդիսանալ հետագա դեպքերի համար:

I guess my room is all right, porter?

I am Mr. James B. Coulson, of New-York, and I wrote on ahead.

Այս օրինակում Perfect-ի օգտագործումը կնշանակեր, որ նամակը կապված է հետագա ինչ-որ գործողության հետ:

Չնայած բերված օրինակները ցույց են տալիս այս կամ այն պատճառներով միայն մեկ ձևի օգտագործման հնարավորությունը հանդիպում են նաև դեպքեր, երբ երկու ձևերի օգտագործումը հավասարապես հնարավոր է:

I am very glad you showed me these papers, very glad.

Այս դեպքում անցյալ անորոշի փոխարինումը Perfect-ով ոչ մի առարկայական փոփոխություն կոնստեքստում չէր մտցնի:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Block M. Y., A Course in Theoretical English Grammar, M., 1983
2. Gordon E. M., Krylova J. P., A Grammar of Present-Day English, M., 1986
3. В. Л. Клушанская, Р. Л. Ковнер, A Grammar of the English language.
4. Գ. Ա. Թորմաջյան, Ժամանակակից անգլերենի քերականություն:

A. Թորոյան

ПЕРФЕКТ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ И АНГЛИНСКОМ

Времена группы Perfect выражают действие, соотнесенное (связанное) с *каким-либо* моментом или действием, а именно действием, предшествующее этому моменту или действию.

Времена группы Perfect образуются с помощью вспомогательного глагола to have и причастия II смыслового глагола.

A. Thorgomyan

PERFECT IN THE ARMENIAN MODERN AND ENGLISH

The Perfect forms denotes an action completed before the present moment (and connected with it) or before a definite moment in the past or future.

It is formed by means of the auxiliary verb to have in the required tense and Participle II of the notional verb. In the interrogative form the auxiliary verb is placed before the subject. In the negative form the negative particle not is placed after the auxiliary verb.